Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2023 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ 302-Լորոշմամբ
Գործում է սկսած 2023 թվականի նոյեմբերի 24-ից

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք՝ www.idbank.am հասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Հեռախոսազանգերի կենտրոն՝ (+37410) 59 33 33 , (+37460) 27 33 33 հեռախոսահամարներով:

ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ VISA ՔԱՐՏԵՐԻՆ

Ծառայության տեսակ	Քարտից քարտ միջազգային փոխանցում (Ծառայությունը հասանելի է IDBanking.am հարթակում և Idram&IDBank բջջային հավելվածում)
Քարտի տեսակ	Բանկի կողմից թողարկված Visa վճարային համակարգի քարտեր
Փոխանցման արժույթ[1]	ՀՀ դրամ, Եվրո, ԱՄՆ դոլար, ՌԴ ռուբլի
Ծառայության միջնորդավճար	2% նվազագույնը 1,000 ՀՀ դրամ

Գործարքի առավելագույն քանակ[2]	Ըստ երկրի ռիսկի դասի[3]	Բարձր ռիսկային	Միջին ռիսկային	Ցածր ռիսկային
	Օրական գործարքներ	5	25	30
	Շաբաթական գործարքներ	10	40	50
	Ամսական գործարքներ	15	125	150

Գործարքի առավելագույն գումար[4]	Ըստ երկրի ռիսկի դասի	Բարձր ռիսկային	Միջին ռիսկային	Ցածր ռիսկային
	Մեկ գործարք	10,000 ԱՄՆ դոլար (համարժեք արժույթ)		
	Օրական գործարքներ	10,000 ԱՄՆ դոլար (համարժեք արժույթ)	15,000 ԱՄՆ դոլար (համարժեք արժույթ)	25,000 ԱՄՆ դոլար (համարժեք արժույթ)
	Շաբաթական գործարքներ	15,000 ԱՄՆ դոլար (համարժեք արժույթ)	30,000 ԱՄՆ դոլար (համարժեք արժույթ)	50,000 ԱՄՆ դոլար (համարժեք արժույթ)
	Ամսական գործարքներ	30,000 ԱՄՆ դոլար (համարժեք արժույթ)	70,000 ԱՄՆ դոլար (համարժեք արժույթ)	100,000 ԱՄՆ դոլար (համարժեք արժույթ)

[1] Գործարքի գումարը փոխարկվելու է համաձայն «ԱյԴի Բանկ» ՓԲԸ Վճարային քարտերի սպասարկման կանոնների:
[2] Գործարքների առավելագույն քանակը անկախ երկրի ռիսկի դասից չի կարող գերազանցել օրական 30, շաբաթական 50 և ամսական 150-ը:
[3] Երկրների ամբողջական ցանկը ներկայացված է այստեղ: Երկրների ռիսկի դասը սահմանված է Բանկի ներքին քաղաքականության համաձայն:
[4] Գործարքների առավելագույն գումարը անկախ երկրի ռիսկի դասից չի կարող գերազանցել օրական 25,000 ԱՄՆ դոլար (համարժեք արժույթ), շաբաթական 50,000 ԱՄՆ դոլար (համարժեք արժույթ) և ամսական 100,000 ԱՄՆ դոլարը (համարժեք արժույթը):

Ընդհանուր պայմաններ

1. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն:
2. Փոխանցում ստացող քարտի կարգավիճակը պետք է լինի ակտիվ: Ակտիվ կարգավիճակ չունեցող քարտին կատարված փոխանցումը կմերժվի փոխանցումը ստացող բանկի կողմից:
3. Գումարը փոխարկվելու է ստացող քարտի արժույթի՝ ըստ տվյալ քարտը թողարկած բանկի կողմից սահմանված փոխարժեքի:
4. Գումարը կակտիվանա ստացող քարտին հաշված րոպեների ընթացքում: Բանկը պատասխանատվություն չի կրում այն դեպքերում, երբ փոխանցվող գումարը ակտիվանում է նշված ժամանակահատվածից ավելի ուշ կամ չի ակտիվանում ստացող Բանկի կողմում առաջացած խնդիրների պատճառով:
5. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել սակագները՝ դրանք ուժի մեջ մտնելուց 15 օր առաջ հրապարակելով Բանկի պաշտոնական կայքում:
6. **Բանկի և հաճախորդի միջև ծագած վեճերը կարգավորվում են կողմերի միջև բանակցությունների միջոցով:**
   Կողմերի միջև ծագած վեճերը կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով («Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով), Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ Էլ. փոստ՝ info@fsm.am Հեռախոս՝ (+37460) 70 11 11 Ֆաքս՝ (+37410) 58 24 21:
7. **Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:**
8. ***Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել:***
9. Գործարքները հնարավոր է իրականացնել ինչպես քարտային հաշվի արժույթով, այնպես էլ քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով՝ տվյալ գործարքի օրվա համար Բանկի կողմից սահմանված փոխարժեքով:
10. Գործարքի գումարը քարտային հաշվի արժույթի փոխարկելու արդյունքում փոխարժեքների տարբերությունից առաջացած վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:
11. Առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:
12. *Հաճախորդը իրավունք ունի Բանկի հետ հաղորդակցվել իր նախընտրած տարբերակով՝ էլ. փոստ կամ փոստային կապ: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:*
13. Բանկի կողմից հեռավար սպասարկումն իրականացվում է Բանկի օնլայն և մոբայլ բանկինգների միջոցով: Բանկի հեռավար սպասարկման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները ներկայացված են «Հեռավար բանկային ծառայությունների մատուցման հրապարակային պայմաններում»
14. Հաճախորդը չպետք է ներառված լինի Բանկի անցանկալի հաճախորդների ցանկում: Բանկի անցանկալի հաճախորդ դասակարգելու վերաբերյալ իրավահարաբերությունները կարգավորվում են «Բանկի կողմից հաճախորդին անցանկալի դասակարգելու չափանիշները սահմանելու և նրանց հետ հարաբերությունների կառավարման վերաբերյալ» ընթացակարգով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ